670 Չգիտեի՝ որքան շատ ես ինձ սիրում,

1. Չգիտեի՝ որքան շատ ես ինձ սիրում,
Սիրում ես ու միշտ մեղքերս ներում,
Չգիտեի, որ ինձ վաղուց էիր ընտրել,
Թեև ես անարժան մարդ եմ եղել:

- Որդի՛ս, հասկացի՛ր, քեզ համար եմ Ես խաչվել,
Իմ սուրբ արյունը քեզ համար եմ Ես հեղել,
Որդի՛ս, հավատա՛, ներել եմ քո մեղքերը,
Իզուր չեմ կրել Ինձ վրա այս վերքերը:

2. Որքա՛ն ես ինձ համբերել ու սպասել,
Որքա՛ն ես ինձ համար Դու արտասվել,
Զղջում եմ, Հիսո՛ւս, գիտեմ՝ ներել ես,
Քանզի Դու գթած, ողորմած Տեր ես:

3. Ուզում եմ Քեզ ավելի ճանաչել,
Անունդ դավանելուց չամաչել,
Ուզում եմ դառնաս իմաստը կյանքիս,
Տեր Հիսո՛ւս, փափագում է Քեզ հոգիս: